ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի ինն ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 21592.3 մլն դրամ՝ պլանավորված 21500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.4 %-ով կամ 92.3 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 0.1 %-ով կամ 14.2 մլն դրամով:

Սեպտեմբեր ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3195.6 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 79 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 36 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 44.1 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 99 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 65-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 14-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 5-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության, 3-ը՝ պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 7 այլ ուսումնասիրություններ:

«Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում բացահայտվել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 6 դեպք և պարտադրվել դրանք իրականացնող ֆիզիկական անձանց դադարեցնել ապօրինի գործունեությունը մինչև համապատասխան պահանջների ապահովումը:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 10 վարչական գործ՝ 31.0 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 3.8 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 77 վարչական գործով սահմանվել է 1.4 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 200.0 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5135 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4304:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 34 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 17 վարձու աշխատողի՝ 2.3 մլն դրամի չափով:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության օպերատիվ հետախուզության և ստուգումների գործառույթ իրականացնող երեք աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 29 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2016 թվականի 3-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 631 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացում հարկ վճարողներին աջակցելու նպատակով ֆինանսների նախարարի 27.09.2016թ. N 459 հրամանի համաձայն սեպտեմբերի 30-ից հարկային մարմնում մեկնարկել է «Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լրացման և հանձնման ընթացակարգեր» թեմայով ուսուցողական դասընթացներ, որին մասնակցում են 118 հարկ վճարողներ:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 378 ելքագրվել՝ 169 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 11 գրություն: